ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը**

Անի Հունանյան, ֆիսկալ ռիսկերի կառավարման վարչության առանձին գործառույթներ համակարգող խորհրդական

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Բուժարեստ (Ռումինիա), 2023 թվականի սեպտեմբերի 12-ից մինչև սեպտեմբերի 15-ը ներառյալ

3. **Հրավիրող կողմը.**

Համաշխարհային բանկ

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Համաշխարհային բանկի կողմից կազմակերպվող «Կրիտիկական աղետներին ու արտակարգ իրավիճակներին արձագանքման կարողություններն Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի ընտրված երկրներում» խորագրով տեղեկատվության փոխանակման տարածաշրջանային միջոցառմանը և ուսումնական այցին մասնակցություն: Քանի որ Ֆիսկալ ռիսկերի կառավարման վարչության գործառույթներից է բնական աղետներից բխող ֆիսկալ ռիսկերի գնահատումը, այցի շրջանակներում նախատեսվում էր թեմային առնչվող փորձի փոխանակում, Ռումինիայի՝ ոլորտի զարգացմանն ու բնական աղետների առաջացման պարագայում պետության հակազդման մեխանիզմներին և ֆինանսավորման աղբյուրներին ծանոթացումը:

5. **Քննարկված թեմաները.**
   - Ռումինիայի արտակարգ իրավիճակների արձագանքման համակարգի ներկայացում
   - Ռումինիայում Համաշխարհային բանկի բնական աղետների կառավարման ծրագրի ներկայացում
   - Աղետների ռիսկի կառավարման ծրագրի հզորացման ուղղությունների և քայլերի ներկայացում՝ ընդգծելով ճկուն, կայուն և արտակարգ իրավիճակների ժամանակակից արձագանքմանը պատրաստ շենքերի առկայության կարևորությունը

- Այցելություններ և քննարկումներ (Բուխարեստից դուրս). այցելություններ Արտակարգ իրավիճակների կառավարման ուսուցման բարելավման ազգային կենտրոն և վերջերս կառուցված Հրշեջ կայաններից մեկը՝ Միզիլում
- Աղետների կառավարման և արձագանքման կարևոր ասպեկտների համապարփակ ակնարկ, ինչպես նաև ԵՄ և GFDRR հիմնադրամների միջոցով ֆինանսավորվող բնական աղետների կառավարման տեխնիկական աջակցության գործիքակազմի ներկայացում:
- Ժամանակակից աղետների և արտակարգ իրավիճակների կառավարման ոլորտում ներդրումներ կատարելու մարտահրավերների քննարկում, փորձի փոխանակում:
- Այցելություն Բուխարեստ-Իլֆովի Արտակարգ իրավիճակների տեսչություն, որին հաջորդել է տեխնիկական նիստ՝ կապված այլ արտակարգ իրավիճակների գործակալությունների համար համապատասխան տրանսպորտային միջոցների և սարքավորումների կառուցման և գնման վերաբերյալ մարտահրավերների և քաղված դասերի, նախաշինարարական ուսումնասիրությունների, նախագծային ուսումնասիրությունների, շինարարության և շենքերի ընդունման վերաբերյալ:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**
Բացի 5-րդ կետով ներկայացված թեմաների շրջանակներում քննարկումներին մասնակցությունից և փորձի փոխանակումից, ՀՀ Ֆինանսների նախարարության ներկայացուցիչները առաձին քննարկում են ունեցել Ռումինիայի Ֆինանսների նախարարության ներկայացուցչի հետ, մասնավորապես հետևյալ ուղղություններով՝ բնական աղետների կառավարմանն ուղղված գործընթացներում Ֆինանսների նախարարության ներգրավվածությունը, դերը, ֆինանսավորման գործիքների առանձնահատկությունները, ֆինանսավորման և որոշումների կայացման մեխանիզմները, Համաշխարհային բանկի Cat DDO-ների բովանդակությունը, առաջացող խնդիրները, ֆինանսավորման գործիքի կիրառման Ռումինիայիի փորձը, առանձնահատկությունները, հնարավորությունները և այլն:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Գործման ընթացքում ձեռք են բերվել մի շարք պայմանավորվածություններ, որոնք կնպաստեն թեմայի առնչությամբ առաջիկայում ՀՀ ֆինանսների նախարարությունում նախատեսվող աշխատանքների առավել արդյունավետ իրականացմանը: Մասնավորապես՝ առաջիկայում ըստ անհրաժեշտության կիրականացվեն քննարկումներ Համաշխարհային բանկի՝ Ռումինիայի և տարածաշրջանի, ինչպես նաև Ռումինիայի Ֆինանսների նախարարության ներկայացուցիչների հետ: Գործուղման ընթացքում Ֆիսկալ ռիսկերի գործառույթների շրջանակում աշխատանքների առավել արդյունավետ իրականացման, տեղեկատվության արդյունավետ հավաքագրման և փոխշահավետ համագործակցության համար պայմանավորվածություններ են ձեռք բերվել Ներքին գործերի նախարարության համապատասխան ոլորտի ներկայացուցիչների հետ: Նախատեսվում են համատեղ աշխատանքների իրականացում, որոնք կնպաստեն բնական աղետներից բխող ֆիսկալ ռիսկերի գնահատման մեխանիզմների բարելավմանը:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Գործուղման ընթացքում ձեռք բերված տեղեկատվությունը կնպաստի Ֆինանսների նախարարության կողմից՝ Համաշխարհային բանկի Cat DDO գործիքի կիրառման հնարավորության մասով մոտեցումների ձևավորմանը: Ձեռք բերված համագործակցությունները կնպաստեն նաև Ֆիսկալ ռիսկերի կառավարման վարչության լիազորությունների շրջանակում՝ բնական աղետներից բխող ֆիսկալ ռիսկերի գնահատման մեխանիզմների կատարելագործմանը և հետազոտական արդյունքների բարելամանը: Առաջիկա համատեղ աշխատանքի արդյունքում հնարավոր առաջարկությունները ի լրումն կներկայացվեն:

9. Ստորագրությունը, ամսաթիվը.

Անի Հունանյան

19.09.2023թ.